Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
Իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
Հասցե՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան փ., 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԱՐԱՇ ԴԵՐԱՄԲԱՐՇԻ «ՍՆՆԴԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉ ԱՅՍՕՐ»

վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Արաշ Դերամբարշի «Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչ այսօր» վերտառությամբ ատենախոսության թեման արդիական է, նվիրված է սննդային թափոնների շրջանառության իրավական հիմնախնդիրների հետազոտությանը:

Ատենախոսության արդիականությունն ու գործնական նշանակությունը պայմանավորված է նաև այն մասշտաբային հիմնախնդրով, որ *«Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) տվյալներով՝ ամբողջ աշխարհում արտադրվող սննդամթերքի ապշեցուցիչ քանակը՝ 30%-ը դեն է նետվում, այնինչ միլիոնավոր մարդիկ սովամահ են լինում: Սա նշանակում է տարեկան մոտավորապես 1,3 միլիարդ տոննա պարենամթերք, որը հավասար է հացահատիկի համաշխարհային մատակարարման կեսին»:*

Հետազոտությունն ընդգծում է սննդամթերքի թափոններին անդրադառնալու հրատապությունը՝ որպես գլոբալ հրամայական, որն ունի խորքային ազդեցություն մարդու առողջության, շրջակա միջավայրի կայունության և սոցիալական արդարության վրա:

Սննդամթերքի թափոնների վերամշակումը կապված է ինչպես գիտակցության, այնպես էլ երկրների զարգացածության հետ: Դրա հետ միաժամանակ այս ոլորտում հաջողություններ գրանցելու նպատակով անհրաժեշտ է նախաձեռնել իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների շարք, ինչպիսին գործարկվել է Նիդեռլանդներում՝ «Առանց թափոնների ցանց» հարթակի միջոցով: Այս համատեքստում կարևոր է նաև ՄԱԿ-ի կողմից սեպտեմբերի 29-ը որպես սննդամթերքի կորստի և թափոնների կրճատման իրազեկման միջազգային օր հայտարարելը, ինչը լավ առիթ է Հայաստանում այս ուղղությամբ իրազեկման արշավներ իրականացնելու համար:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է և ձևավորված է համապատասխան պահանջների պահպանմամբ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել է մեծ ծավալի գրականություն՝ հիմնականում օտարալեզու, այդ թվում՝ գիտական աշխատություններ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ իրավական փաստաթղթեր:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի տպագրած 9 գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են միջազգային գրախոսվող պարբերականներում: Աշխատանքը շարադրված է ոչ ստանդարտ ձևով ու լեզվամտածողությամբ, ինչը դրական ենք գնահատում:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը գնահատում ենք դրական, սակայն այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց կապակցությամբ ստորև ներկայացնում ենք ստորև դիտողությունները.

1. Ատենախոսության նպատակն այդքան էլ հստակ ձևակերպված չէ: Այսպես, մի դեպքում նշվում է, որ *«սույն ուսումնասիրության նպատակն է անդրադառնալ սննդամթերքի թափոնների հետ կապված հատուկ խնդիրների՝ տրամադրելով ապացույցների վրա հիմնված լուծումներ»*, մեկ այլ դեպքում՝ *«այս հետազոտությունը նպատակ ունի խորացնել սննդամթերքի թափոնների բարդությունների ըմբռնումը»*: Մի կողմից հստակ ձևակերպված չէ նպատակը,

իսկ մյուս կողմից՝ հետագա շարադրանքում քննարկվող հիմնախնդրի մասին առավել համապարփակ անդրադարձ կա:

2. Ատենախոսություններում ու սեղմագրերում սովորաբար օգտագործվում է «նորույթ» եզրույթը, որը իսկ այս դեպքում դրա փոխարեն կիրառվել է «նորամուծություն, նորարարություն» տարբերակները, որոնք բառօգտագործման ավանդույթների տեսանկյունից այդքան էլ ընդունելի չէ:
3. Հետազոտության թեմայի և դրանում ներկայացված հարցադրումների արդիականության մասին երկրորդ կարծիք լինել չի կարող, սակայն միաժամանակ պետք է փաստել, որ ընտրվել է հիմնախնդրի շատ լայն սպեկտր ու մեծ ժամանակաշրջան, ինչը հնարավոր չէ իրականացնել մեկ ատենախոսության շրջանակներում, ավելին՝ թեման ծավալուն է նույնիսկ դոկտորական ատենախոսության համար: Մի կողմից, հպանցիկ է անդրադարձ կատարվել անտիկ ժամանակներին, իսկ մյուս կողմից առավել մանրամասնությամբ քննարկել հիմնախնդիրը Եվրոպայում, մասնավորապես՝ Ֆրանսիայի օրինակով, ինչով պայմանավորված էլ չի պահպանվել համամասնությունը:
4. Խոսելով «Թափոնների կառավարման և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի մասին՝ Ատենախոսը նշում է, որ օրենքում փոփոխություններ կատարելու նախաձեռնությունը լրամշակման փուլում է, այն միայն նախագիծ է, իսկ հետո ավելացնում, որ *«Ցավոք, այս օրենքը դեռևս ուժի մեջ չէ»:*

   Այս համատեքստում հարկ է նշել, որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, որում կատարվել են վերոհիշյալ փոփոխությունները, ընդունվել է 2023 թ. ապրիլի 13-ին, իսկ պաշտոնական հրապարակման օրը 2023 թ. մայիսի 11-ն է:
5. Ատենախոսության մեջ հանդիպում ենք ոչ հստակ ու կրկնվող մտքերի, ակադեմիական լեզվին ոչ հարիր բառապաշարի գործածման, տառասխալների, վրիպակների, որոնց մի մասը, միգուցե, թարգմանության արդյունք է:

Հաշվի առնելով այն, որ Ատենախոսը քաջածանոթ է արտերկրի, մասնավորապես՝ Ֆրանսիայի փորձին *(ըստ Հեղինակի՝ Ֆրանսիան առաջատար դիրք է զբաղեցրել թափոնների դեմ պայքարում՝ շնորհիվ իր քաղաքացիների ակտիվ գործունեության, ինչպես նաև 2016 թվականի փետրվարի 3-ին հաստատված սննդամթերքի թափոնների դեմ հայտնի օրենքի)*, գործնական առումով ցանկալի է մշակեր և ՀՀ պատկան մարմիններին ներկայացներ սննդային թափոնների ոլորտը կարգավորող իրավական ակտի նախագիծ, այդ ուղղությամբ ձեռնարկվեր իրազեկման բնույթի միջոցառումներ, որն էլ կբարձրացներ ատենախոսության գործնական արժեքը Հայաստանի Հանրապետության պարագայում:

Այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ ներկայացված դիտողություններն չեն ստվերում գիտական աշխատանքի արժանիքները, դրանց մի մասը կարող է դիտարկվել որպես բանավեճի առարկա: Ատենախոսությունը տեսական և գործնական մեծ հետաքրքրություն ներկայացնող գիտական աշխատություն է, որն ունի անհրաժեշտ տեսական մակարդակ և գիտական նորույթ:

Այսպիսով, **ԱՐԱՇ ԴԵՐԱՄԲԱՐՇԻ «ՍՆՆԴԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉ ԱՅՍՕՐ»** վերտառությամբ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունից կարող ենք հետևություն անել, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Հեղինակը կատարել է բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեցող աշխատանք, որի համար կարող է շնորհվել ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորման հիմնադիր,
«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի գլխավոր խմբագիր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԱՎԵՏԻՔ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 մայիսի 2025 թ.

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիք Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորման նախագահ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԵՏԻԿՅԱՆ

20 մայիսի 2025 թ.